

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 2-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տէ՛ր, Տէ՛ր, դու ես կնիք նմանութեան և լցաք իմաստութեան» բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ նորոգ հանգուցյալ հայրենի գրող Մուշեղ Հովեի Գալշոյանի հիշատակին:

Պատարագից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է հանգուցյալի հարազատներին և մխիթարիչ խոսք ասում նրանց՝ կրած մեծ կորստի պատճառով:

*
* *

Նոյեմբերի 5-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 9-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա վրդ. Արբաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ... սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս և արժանի գրոց յիշատակի» (Մովսես Խորենացի) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նոյեմբերի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 16-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Կոմիտաս աբդ. Հովհաննյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ» (Մատթ. ԺԱ 15, ԺԳ 9) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 17-ին, երկուշաբթի.—Այսօր,

երեկոյան, Ֆրանսիայից Մայր Աթոռ է ժամանում Փարիզի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագաշյանը:

Սրբազան հորը օդանավակայանում դիմավորում են Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը:

*
* *

Նոյեմբերի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ են ժամանում Տ. Գնել եպս. Ճերեճյանը (Բեյրութից), Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը (Դամասկոսից) և Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուրյանը (Բաղդադից):

Օդանավակայանում սրբազան հորը և հայր սուրբերին դիմավորում են Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Տ. Արսեն եպս. Բերբերյանը և Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Նոյեմբերի 20-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ են ժամանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը և Իտալիայի հայ համայնքի հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգսյանը:

Օդանավակայանում սրբազան հորը և տեր հորը դիմավորում է Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Նոյեմբերի 21-ին, ուրբաթ.—Այսօր Վիեննայից Մայր Աթոռ է ժամանում Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Օդանավակայանում հայր սուրբին դիմավորում է Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

*
* *

Նոյեմբերի 22-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ են ժամանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը և Անգլիայի հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

Սրբազան հայրերին դիմավորում են Տ. Գրիգորիս և Տ. Մոմիկ վարդապետները:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին են այցելում մի խումբ բեյրութահայ ուխտավորներ:

*
* *

Նոյեմբերի 23-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը: Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նոյեմբերի 25-ին, երեքշաբթի.—Այսօր Ավստրալիայից Մայր Աթոռ է ժամանում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպ. Գազանճյանը:

Օդանավակայանում սրբազան հորը դիմավորում է Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանը:

*
* *

Նոյեմբերի 29-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը: